ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքացի Աշոտ Մանուկյանի և քաղաքացի Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործով դիմողների ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանը և Ա. Ղազարյանը 18.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան են ներկայացրել նշված գործով 26.03.2013թ. նշանակված դատաքննության օրը մեկ այլ օր փոխադրելու և գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով կազմակերպելու վերաբերյալ միջնորդություն։

Քննության առնելով դիմող կողմի ներկայացուցիչների միջնորդությունը և ելնելով գործով լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Բավարարել նշված գործով դիմող կողմի ներկայացուցիչների միջնորդությունը՝ դատաքննության օրը մեկ այլ օր փոխադրելու մասով, իսկ գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով կազմակերպելու մասով՝ մերժել։

2. Գործի դատաքննությունը հետաձգել և սկսել 2013 թվականի ապրիլի 30-ին, ժամը 10.00-ին։ Այդ կապակցությամբ վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 13-ի ՍԴԱՈ-78 աշխատակարգային որոշումը և ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՆԴԱՄ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

26 մարտի 2013 թվականի
ՍԴԱՈ-21